

Ուխտ անելը հեշտ չէ և ոչ էլ ամեն մարդու բան է: Ուխտն ահաւոր պիտի լինի ու սուրբ Ուխտը մարդու կեանքի հիմքը որոշող խորհրդաւոր տեղն ու բուսն է: Ուխտ կարող է անել միայն ոգու գաւակը, կեանքի իմաստն ըմբռնել ցանկացողը. ժողովրդի անկաշառ ու հաւատարիմ գործիչը:

Փրկիչն ինքը ուխտ արաւ մինչև հրապարակ գալը և բոլոր մեծ գործիչները այդ նոյն ուղիով են գնացել ու գնում են:

Հապա ո՞ւր է մեր ոգին: Ինչո՞ւ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը մեր Ուխտատեղին չէ, ինչո՞ւ մեր սիրտն ու միտքն այնտեղ չենք նուիրաբերում ահաւոր երամով նրա քարոզած մեծ գաղափարին: Էլ ի՞նչ աւելի թանգ, վսեմ ու անմեռ արժէք ունինք, քան հայ տառը, մեր մաքրի լոյսը. էլ սրտեղ հայը կարող է իր ուխտն անել մեր ժամանակում, սրբազան ուխտը, քան Ս. Մեսրոպի շիրիմի առաջ:

Ոչ թէ այս տարի, այլ ամեն տարի ամեն մի հայի պարտքն է, եթէ նա ուզում է, եթէ նա զգում է ու ըմբռնում է, որ իբրև հայ ու մարդ պիտի ապրէ, գործէ, գնալ այդ խնկելի շիրիմին Ուխտ:

Մեր ազգային Ուխտ Գեորգիանի տօնը թող ամեն հայի համար ահաւոր երդման մեծ տօնը դառնայ մեր ազգային մեծ Ուխտատեղին գնալ ու երդուել, ուխտել— հաւատարիմ մնալ Ս. Մեսրոպի վեհ գաղափարին: Ահա մեր միակ միջոցը յաւերժացնելու այս մեծ տօնը, մեր սուրբ հօր անգին յիշատակը:

Կենանք, ուխտ գնանք աշխարհիս ամեն ծայրից, ամեն անկյունից, սրտով ուխտ գնանք ու մեր ահաւոր երդում-ուխտը տանք:

Օշականումն է գտնուում մեր մեծ Ուխտատեղին:

Pessimist

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԵՒ ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ՏՕՆԱ-
ԽՄԲՈՒԹԻՒՆ

(Հայ գրերի գիտի 1500-ամեակ եւ տպագրութեան
գիտի 400-ամեակ)

Այսօր հոկ. 12-ին, Ս. Թարգմանչաց տօնին սահմանած կարգով կատարուում են համազգային մեծ ու անգուղական յօբելանները: Աշխարասփիւս հայերի սիրտը այս մեծ և խորհրդաւոր տօնին լցուած պիտի լինի անհուն բերկրանքով ու անասելի խանդավառութեամբ, նրա միտքն ու հայեացքը սեւեռած պիտի լինի Վաղարշապատից 2 ժամ հեռաւորութեամբ գտնուող Օշական գիւղը, որի եկեղեցու բնի տակ հանգչում են հինգերորդ դարու ամենահանճարեղ մեծ մարդու, հայ գրերի գրտիչ Ս. Մեսրոպ Մաշտոցի խնկելի նշխարները:

Հինգերորդ դարու սկզբին, փրկչական 412-ին հայ կեանքը մտաւ մի նոր տարիչըրան. այդ տարիչըրանը սկիզբը տուեց հայի կուլտուրական տան կեանքին, նրա

ազգային գիտակցութեան, նրա ցեղական բնագրի զօրեղ արտայայտութեան, նրա առանձնացած կեանքի օղակներն:

Մինչև հայ գրերի գիւտը հայի ամբողջական գոյութիւնը, որպէս գիտակից ազգի՝ գուրկ սեպհական գրերից ու լիզուից,—ենթակայ էր պատահականութեան, փորձանքի ու անգամ անհետանալուն:

Այդ փորձանքից փրկեց հայութիւնը Տարօն գաւառի (այժմ Մուշի) Հացեկաց (Մաշտոց) գիւղի գաւակը— Ս. Մեսրոպ Մաշտոցը՝ Վաւազապուհ (Արշակունեաց) հայոց թագաւորի և Սահակ-Պարթև կաթողիկոսի օրերով հինգերորդ դարու սկզբին:

Այս գիւղի պատմութիւնը յետագայ սերունդները իմացան Ս. Մեսրոպի անմիջական աշակերտ Կորիւն-Աքանչելու, Մովսէս Խորենացու և նրա Աղան աշակերտի մօտ աշակերտաց Ղազար-Փարպեցու աղբիւրներից:

Քրիստոնէութիւնը տարածուելով Հայաստանում՝ ս. Մեսրոպի համար երկար որոնումների, հետապնդումների, ուսումնասիրութիւնների առարկայ դարձաւ հայ սեփական գրերի գիւտի խնդիրը: Նա թողեց պալատական կեանքը և ճգնում էր տարիներով հասնել իր փափագին: Նա ուսումնասիրում էր լեզուները և խորհրդակցում գիտնականների հետ: Վերջապէս Նպիփանոսի աշակերտ գիտնական Հովհաննոսի աշակցութեամբ. նա, մէկ օր, իր ստեղծագործական ոգեչնչումների մօմենտին՝ տեսաւ ԱՆՍՍՍՍ համարուած ձևքը, որը գրում էր քարի վրայ նրա փափագած այբուբէնը:

Կար, յիբաւի, այսպէս անուանած ճնախնական հայ այբուբէնը՝ ասորի Կանիէլ եպիսկոպոսի հնարած, սակայն այդ այբուբէնը, ինչպէս հաստատեցին մասնագէտները, պարունակում էին օտար լեզուի տառեր, որոնք գործածութիւնից դուրս էին զցուած:

Ս. Մեսրոպը գտաւ բուն հայկական գրերը՝ ընտանի ու համապատասխան հային անհատական հոգուն, իր խկատիպ, առանձնայատուկ եռանգներով ու նրբերանգներով, իր յատուկ կազմով, առողանութեամբ ու ցայտուն յատկանշաններով:

Ենարհիւ Հայաստանի աշխարհագրական լեռնոտ դիրքէ ու կլիմայական տարբերութիւնների, հայ այբուբէնը իր ծնունդով ու ստեղծագործութեամբ աւելի ճոխ ու բազմահնչիւն է ուրիշ շատ ազգերի այբուբէնից: Ամեն մի հնչիւն, ամեն մի տառ պայտնական մի լեզու պիտի լինի հայութեան համար, պաշտպամունքի առարկայ, արքրութիւն սրբոց:

Մինչև սեպհական գրերի գիւտը հայերը իրենց պաշտօնական թղթերը ու այլ գրագրութիւնները կատարում էին օտար լեզուներով՝ յոյն, ասորի, պարսիկ, սեփական գրերի գիւտը վերջ դրեց այդ մուրացկանութեան:

Եստ մեծ էր այդ գիւտի յայտնութիւնը. ցնցեբգով ու անհուն ուրախութեամբ Վաղարշապատի մօտ գիմաւորեցին հանճարեղ Գտիչ Ս. Մեսրոպին՝ թագաւոր, կաթողիկոս, իշխաններ, աւագանիք և ժողովուրդ ու հանգի-

սաւոր կերպով ընդունեցին Մեծ Մարդուն:

Այդ հանճարեղ գիւտը դարձաւ մեր ազգի վերածնութեան բրաբրիոնը, հայ բաժան-բաժան ապրող ցեղերի միութեան օղակը, համազգային ոգու գիտակցութեան արշալոյսը, նրա կուլտուրական կեանքի նախակարողեւորը: Նրա մէջ արտայայտութիւն գտաւ հինգերորդ ոսկէ դարը և իր հանճարեղ մատենագիրներով—քերթողահայր Մովսէս Խորենացի, «Մեղրալեզու» Եղիշէ, ոճի ու դարձուածքների ճարտարապետ-ականագործ ս. Գրիգոր Նարեկացի, Ներսէս Ենորճալի և այլք,— որոնք հին մատենագրութեան պատմութեան լուսապայծառ աստղերը դարձան:

Առաջին մեծ գործը, որը տառերի գիւտից յետոյ կատարուեցաւ—Ս. Գրքի թարգմանութիւնն էր Ս. Մեսրոպ և Ս. Սահակի ջանքերով: Ս. Գրքի թարգմանութեամբ հայերը կանխեցին ուրիշ՝ ներկայումս մեզանից կուլտուրապէս բարձր կանգնած ազգերին:

Այսօրուայ տօնը պիտի իրաւամբ համարուի անզուգական համազգային, համահայկական տօն. նա հաւասարապէս պիտի բերկրանքի ու հրճուանքի աղբիւր լինի համայն հայերի համար, առանց դաւանական խրտուրթեան. նա հաւասարապէս պայտամունքի առարկայ պիտի լինի ազգով մի և՛ հայ լուսաւորչականի, և՛ հայ կաթողիկի, և՛ հայ-բողոքականի համար, որովհետև այդ գրքերի գիւտից օգտուել են համայն հայերը, որովհետև նա դարձաւ ամենի համար հոգիների յոյս, մտքերի լոյս:

Յիշելի է Մխիթարեանների անգնահատելի բեղմնաւոր ծառայութիւնները հայ մատենագրութեան, գրականութեան, այլևայլ գրական ճիւղաւորութեանց մէջ, իրենց տուած մի շարք անմոռանալի կորիֆէյներով: Ուրեմն թո՛ղ այդ մեր տօնը համարուի միևնոյն ժամանակ համազգային վեհազոյն գաղափարի, համերաշխութեան միութեան, եղբայրութեան պերագոյն սկզբունքների տօն:

Այդ Մեծ Յօրեյեանը յաւերժացնելու համար Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը կարգադրել է կազմել մի գալրոցական գրամագլուխ (Փօնդ) «Մեսրոպեան լուսնայ» անունով, որի տոկոսներով պիտի պահպանուին մեր եկ. ծխ. դպրոցները և բացուին նորերը:

Այդ կարգադրութիւնը վերին աստիճանի խելացի է և միանգամայն համապատասխան ու նպատակայարմար Մեծ տօնի վեհութեան, նա ընդ սմին միանգամայն մօտիկ է հանճարեղ Գալի ոգուն ու ցանկութիւններին, ուստի արժանի է միանգամայն ամեն տեսակ համակրութեան և օգնութեան համայն հայերի կողմից անխափր:

Հայը իր փրկութիւնը պիտի գտնի ներսից, նա կեանքի տենդոտ յարաճուն մաքառումների մէջ պիտի պահի իր գոյութիւնը միայն կրթութեամբ ու լուսաւորութեամբ, իսկ դրա համար հարկաւոր են դպրոցներ. եթէ կամիք, կասեմ աւելին՝ հայի ազատագրական խոյեանքները կարող են մարմնանալ միայն իրենց ներքին

խաղաղ կուլտուրական զարգացմամբ, կրթական կուլտուրական հասարակութիւններով՝ յարմարեցրած ժամանակի պահանջներին: Այդ բանը հասկացաւ դեռ 1500 տարի առաջ հայ գրքերի սքանչելագործ Ս. Մեսրոպը և 45 տարի շարունակ շրջիկ քարոյղի առաքելութիւնը ստանձնած տարածում է հայերի մէջ քրիստոնէական լոյս և բացում էր դպրոցներ:

Նրախաագիտական խորին յարգանք և յաւերժ անմոռաց յիշատակ Մեծ Մարդու անուն

Հայ գրքերի գիւտի յօրեյեանի հետ այսօր կատարուում է և տպագրութեան 400-ամեայ յօրեյեանը: Այդ հանճարեղ գիւտը կատարել է գերմանացի մի հասարակ արհեստաւոր—Յովհաննէս Գուտենբերգը 1443 թ. այդ գիւտը ունի համաշխարհային նշանակութիւն և իրաւամբ Գուտենբերգը կոչուում է «մարդկութեան բարերար»:

Այդ հանճարեղ գիւտը ի միջի այլ ազգերի, միջոց տուեց մեզ՝ հայերիս ազատուելու ձեռագիրների հոգեմաշ արտագրութիւններից և միլիօնաւոր օրինակներով տարածելու ժողովրդի ամեն խաւերում գիր ու դպրութիւն: Առաջին հայ տպարանները մենք ունեցանք արտասահմանեան քաղաքներում—Վենետիկ (1512 թ.), Վիեննա, Ամստերդամ, Մարսէյլ, Պոլիս եայլն. իսկ ներկայումս ոչ միայն քաղաքներում, այլև գիւղաքաղաքներում կարելի է տեսնել տպարաններ:

Տպագրութեան գիւտով առանձին նշանակութիւն ստացաւ և Ս. Մեսրոպի գրքերի գիւտը. հայը կրօնական ազգ լինելուց դառնում է կուլտուրական ազգ:

Յաւերժ յիշատակ Գուտենբերգի հանճարին:

Կար. Թէմուրազեան

ԻՆՉԻ ԾՆՈՒՆԻՒ Է ՀԱՅ ԳԻՐԸ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր մօտ չորսհազարամեայ պատմութիւնը բաժանուում է շատ և շատ շրջանների, սակայն ամենայն իրաւամբ նրան կարելի է բաժանել երկու խոշոր շրջանի—հնթանոսական և քրիստոնէական, որովհետև այդ երկու շրջաններից իւրաքանչիւրը մի բոլորովին ուրոյն պատկեր է ներկայացնում իրանից:

Քրիստոնէութեան մուտքը Հայաստանում մի նոր դարագլուխ բացեց հայոց կեանքում: Ճիշտ է, նախ քան քրիստոնէական շրջանը հայ ժողովուրդը ապրում էր անկախ կեանքով, նա նոյնիսկ հասաւ քաղաքական այնպիսի մեծութեան ու փառքի, որպիսին նա երբէք չունեցաւ քրիստոնէական շրջանում. բայցեւայնպէս հեթանոսական շրջանը շտուեց նրան այն՝ ինչ մի ժողովրդի ուրոյն գոյութեան գլխաւոր գործօնն է եղել, նրա ներքին կեանքի հիմնաքարը—հայկական քաղաքակրթութիւն հայկական արտայայտութեամբ:

Եթէ այդ հեթանոսական շրջանը, որ այնքան հարուստ էր քաղաքական անցքերով, հերոսական արկածներով՝ անցաւ գնաց, առանց մեզ համար թողնելով այն